# Հայտարարություն

ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱԿՆԱԼՃԻ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, «ՖՐԱՆՍԵՐԵՆ /8 ԴԱՍԱԺԱՄ/, «ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ /4 ԴԱՍԱԺԱՄ/,«ԵՐԳ-ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» /3 ԴԱՍԱԺԱՄ/

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

- ✓ Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի, ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարի:
- ✓ Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

*1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,*
*2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ,*
*3) անձը հաստատող փաստաթուղթ,*
*4) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,*
*5) ինքնակենսագրություն (Ձև 5),*
*6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
*7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,*
*8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
*9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*
*10) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.*
*11) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:».*

- ✓ Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի սեպտեմբերի 5–ից սեպտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, աշխատանքային օրերին:

- ✓ Մրցույթը կկայանա 2025 թվականի սեպտեմբերի 25-ին, ժամը 14:00-ին «Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:
- ✓ Տեղեկությունների համար զանգահարել 098-31-35-34 հեռախոսահամարով: